

սոսափ Քրիստոսի ի Ռդգեղի^(*) ամին, և ի Արքոյն Գրիգորի Ոչջ ամի. և
ի թվով ՊՃԳ, ի յամսեանն յունվի. ԺԵ. ի մեր կաթաւղիկանութեան՝ որ
է ամ և կէս և աւր ի (քան): Եւ վասն առաւել հաստատութեան՝ իմով
կամաւ ձեռնազբեցի ստորև մերով սովորական կարմիր ձեռնազբաւ. և կըն-
քեցաւ վերոյ աիրական մեծ մատանաւ կամաւք բարձրար մարդասիրին Աս-
տուծոյ աւրէնելոյն յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից. ամէն,

† Մեսրաւ շնորհաւըն Աստուծոյ կաթողիկոս Ամենայն Հայաստանց

կաստանդին կաթողիկոսի համառօտ գրածն ի ններքեւ Մեսրովպայ գրա-
ծին, ըստ իր ըստածին՝ և Գիր Հոգևորական հրամանի աւրէնութիւնն է և
» Կրկին հաստատութիւնն », իր նախորդին վերոգրեալ կոնդակին. յորում
կ'իմացընէ որ անոր ընտրած եպիսկոպոսն Գրիգոր՝ եկաւ առ ինքն, կոն-
դակը ի հետ բերելով. կաստանդին այլ ստորագրելով (Կաթողիկոս ամենայն
Հայոց) ի ԺԵ յօւնվարի, ի թուին ՊՃԳ (1375) կու հաստատէ զնոյն Գրի-
գոր յառաջնորդութիւն իւր թեմին, և օրէնելով գթեմականն՝ կու գար-
ձընէ ի տեղու Վիճակաց անուանքն այլ գրէ Հով. Աշատամիր և Հուցեայ:

* Թոււականց առանորդական թիւերը՝ կամ հին կամ նոր ձեռք մի փոխեր Ե' տասն տասն թիւ.
առելցընելով, որպէս զի կոնդակին ներքեւ գրուած կոստանդին կաթողիկոսին թուականին յար-
մարի. ըստ այնմ և ամենին որը յառաջորդ ԺԵ ըլեր է, բնադրին մէջ ինչ ըլլան չիմացուիր.
Մեսրովպայ կաթողիկոսութեան տարւոյ վրայ այլ գրէ մի սցլավութիւն նշմարուի բայց ստուգու-
թենէ ներք չէ երեւածն:

Հարայարելի

— 3 * 5 —

ՅԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

~~~~~

(Ցես յԷ՞ 394)

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԵՒՂԻՌԻԱՑԻ ԱԲԳԱՄԲԵՆ ՄԻՒԶԵՒ ԱՆՑԵԱԼ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

**ԱՅ** տպագրութեան պատմութեան եր-  
րորդ շրջանը կը բանան Միքայէլ կաթու-  
ղիկոս, և իր տասումասէր ջանիցն և փա-  
փաքին գործադիր՝ եւոգիխացին Արգար, իրեն  
աշխատակից ունենալով զորդին զՍովորանշան:

Միքայէլ՝ Արքոյ Հոսաւորչին հայրապե-  
տական աթոռը կը գրաւէ յամն չէ 547—  
1556: Այնպիսի դարու և ատենի մը մէջ՝  
յորում ազգերնիս քաղաքական իշխանու-  
թիւնը կորուսած, եկեղեցական նուիրապե-

տութենէն կը յոսար իր աղխակց և թշուա-  
ռութեանց զարմանը. տարաբաղդաբար այդ  
հոգևորական իշխանութեան ամէն հնարաւոր  
ջանքովն և մոազիր ինամովլքն ալ, փափա-  
քելի բարեկեցութեան վիճակի մը մէջ չէր  
գոնաւէր: Անդապար պատերազմնց և աւար-  
առութիւնց զրովանդակ երկիրն ահաբեկած  
և սասանեցուցած էին, և ամենաուրեք տա-  
րածուած նաև նիմթական կենաց ոչ ապա-  
հով զրութիւն մը:

Այսպիսի դիրքի մը մէջ էին այն ժամանակաց Հայոց հայրապետներն, եկեղեցականութիւնն, և իրենց խնամոց յանձնուած հօն և աշխարհ։

Ձենք գիտեր թէ ի՞նչ առօթիւ Միքայէլ կաթողիկոսի սրտին մէջ յլցաւ խորուրդ՝ տպագրութեան արուեստի բարգաւաճանաց ի մերում աշխարհի։ Հաւանականարար արդէն նախընթաց շրջանին մէջ մեզմէ յիշատակուած քանի մը անձանց ջանքերն և արդինք անձանօթ չէին իրեն, և անոնց անյանդութեամբն իսկ կամ վարդապետ շալով ալ՝ թէ՛ իր և թէ այլոց ուսումնասիրաց մտադրութիւնն զրաւած։ որոնց գիտէին թէ՛ շատ անզամ առաջին փորձերու անյանդութիւնք՝ երաշխաւորութիւն մը կրնան ըլլալ բարույ յապացային։ և թէ գուարութեանց առջեւ՝ լքանիին ու վիատիլը՝ մեծ մարող և մասց յատուկ չէ։ Այս դասու անձանց կը պատկանէին կաթողիկոսն և իրեն մտածութեանը հաղորդ և զործակից Եւգոկիացին Աբգար։

Անշոշ՝ իրենցմէ հետաւոր Եւգոպայի մէջ ապազրական արուեստին կատարելագործաւթեամբ յառաջ եկած բազմապատիկ և բազմապիսի արդեանց և օգտից չէին կրնար բոլորովին անտեղեակ ըլլալ. և վաճառականութեան և առուտրի համար արևմտութ գացող և դարձող ազգայինք՝ երգոպական վաճառուց հետ այդ լուրերն ալ կը բերէին անտարակոյս։ Օր ըստ օրէ զրշագրաց նուազութեան, և նորոգ ընկօրինակութեանց համար կարեւոր ծախուց կարօտութիւնն և ազգին աղքատութեան պատճառու զրաց և ընդօրինակուցաց նուազութիւն աւելի զգալի էր մեր աշխարհին համար։ Տպագրութեան արուեստը ի Հայուսան մոցցնելն ու զարգացընելն, մեծ դիրութիւն մը մաստոցանել էր ուսմանց և դպրութեանց յառաջապիսութեան։

Այս նպատակին հասնելու համար՝ Միքայէլ կաթողիկոս մտածեց՝ հնարագէտ աւճարտարամիս անձինք դրկել յԵւրոպա, որպէս զի հմտանան այն արուեստին, և թէ ի՞նչ միջոցով կարելի էր անսր մտադրը դիւրացընել ի Հայաստան։

Իր ընտրութիւնն ինկաւ՝ Եւգոկիացի Աբգար անունով անձի մը վրայ։

\* \* \*

Մեր պատմութիւնը ուսումնասիրողաց անձանօթ չէ՝ որ իրոգինեան հարաստութեան գրեթէ առաջն ժամանակներէն՝ սկսած էին Հայոց յարաբերութիւնք, ընդ արև մտնեայս. որոց թագաւորը և իշխանը յաճախ խաշակիր զօրաց արշաւանց պատճառուա՛ իրենց զօրաց բանակներով անցեր էին ընդ Հայաստան, զինուց յաջողութեան կամ ձախորանաց միջոցներուն՝ յիշխողաց և ի ժողովրդնէն նույա սէր, քարեկամութիւն, օգնութիւն և կարեկցութիւն տեսներ էին, և գոխարէն՝ ինչ չուան արքունական թագ և իշխանական գաւազն անոնց ընծայեր։

Մասնաւոր մտազրութիւն և զօրով ցուցեր էին մերազգեաց նաև Հոռվիմայ քահանայապետական աթոռոյն վրայ բազմող հայրապետը։

Զեռուրնիս ունինք, շատք ծանրակշիռ և մեծ գնահանատութեան արժանաւորք, նաև քաղաքական տեսակետով, փոխազարձ լսաւութեամբ զրուած և ընդունուած ի իրութիւնեան թագաւորաց մերոց և ի հայրապետաց առ քահանայապետո Հոռվիմայ և անոնց կողմանէ արուած պատափանիք կամ զրաւոր յանձնարարութիւնք առ քրիստոնեայ թագաւորու Եւգոպայ, խօսրով կամ միջնորդութեամբ, երբեմն նաև զրամական տրօց և հարկ տեսնուած ատենին՝ նաև զինուք ժամանելու յօդնութիւն վերահաս մահուան վրանցի մէջ գտնուող ազգի մը եւ ժողովրդնեան։

Սակայն այդ ամէն ջանքերով ալ կարելի շեղաւ այդ անկամը խափանել, և Միքայէլի հայրապետութեան ժամանակ՝ արդէն կատարուած իրողութիւն մ' էր այն, և Հայաստան՝ ամէն իրեն վրացի և սահմանակից ազգաց համեմատ՝ ինչպէս ունեցեր էր իր փառաւոր կեանքը, պիտի ունենար նաև անոր պակասութիւնը. պատմութեան անհրաժեշտ օրէնքէն չէր կրնար զերծ մնալ։ Այն վիճակին մէջ գէթ գյութիւնը պահպանելու համար ստիպուած էր ոչ լոկ իր վրան իշխանակից աշխարհի մէջ գէթ գյութիւնը պահպանելու

խողաց սէրն ու վատահութիւնը, այլ նաև քրիստոնեայ արևմտեան ազգաց մտալրութիւնն և բարեկամութիւն հրաւիրել.

Այսպիսի փափուկ և խոհական պաշատաման և դործոյ սահմանուած կ'երենայ Ալբար :

\* \*

Ուրիշ շատ անզամ զուրցուած և կրկնուած է, թէ ինչպէս Ալբարոյ մեծարոյ և երախտագիտութեան արժանաւոր անունը միայն կայ ազգային պատմազրաց և յիշառակազրութեանց մէջ, առանց օրոշակի և փափաքելի տեղեկութիւն մը տալու իր անձին վրայ :

Կ'ըսուի թէ նշանաւոր անձնաւորութիւն մը ըլլայ՝ իր ազնուական սերնդիւամբ և տոհմիւ, և նոյն քարուն և իրեն ժամանակակից անձինք ի Հոռվմ կը վկայեն իրեն համար թէ յարցունի ցեղէ յառաջ եկած ըլլայ. և յանուանէ Ստեփանս Ռոշքեան իր ժամանակագրականաց մէջ կ'ըսէ. « Պարոն Սէգիր Ալբարեանց, ի զարմէ թագաւորացն Հայոց, եկեալ ի Հոռմ զեսպան Հայաստանեաց »:

Այս վերջին խօսքն յայսնի կ'ըլլայ թէ որպիսի պաշտամումբ կը զրկուի նու ի Հոռվմ ի Միքայէլ կաթուղիկոսէ, որոյ ձեռքը կու տայ թուղթ մը այնպիսի տառերով և լեզուով, որոց ընթերցման և իմաստից խելամուռթեան միայն ինչն զետպանն, կարողաւթիւն և զիտութիւն ունէր :

Զենք կրնար ըսել թէ ինչ էր այզգափինամբով Ալբարոյ յանձնուած թուղթ, և որպիսի բավանդակութիւնն . Հոռայնալզ և ումանք յարևմտեան մատենագրաց՝ կրօնական վերպարանք կու տան անոր, և զայն ամբողջ մէջ կը բերեն: Բայց այլ ենթագրուած զրուածին վաւերականութիւնն ստուգելու համար՝ աւելորդ է ըսել թէ լոկ խօսք և աւանդութիւն բաւական չեն կրնար համարուիլ՝ յամենայնի ստուգութիւն յիշառակարանաց վհնտուած զարսա մէջ, Փափաքելի և պատմական ստուգութեան համար՝ որ ինչուան հիմայ զժուար հետազոտելի, և ներկայ որրազանք քահանայապետին լեւոնի ԺԳ լուսամիտ վեհանձնութեամբ՝ ուսմանց և ուսումնասիրաց համար բացուած վատակիանեան դիւանաց մէջ գտնուի անոր սկզբնազիրն

կամ զեսպանութեան յիշառակութիւնն և նպատակի քանի որ այդ գիւտն եղած չէ, ենթագրութեամբ միայն կրօնամբ յառաջ բերել՝ թէ ի հակառակայիրաց ոմանց և յանհորդուրդ բարեկամոց՝ հայ ազգի և եկեղեցւոյ վրայ այլ և այլ ոչ ուղղի, կամ թերուղի և երբեմն նաև իրարու հակառական տեղեկութիւնք հասած ըլլալով յարեւմուս և մինչև յաթոռն առաքելական, Միքայէլ կամ թուղիկոսի գիւտանին ձեռօր՝ այնպիսի գեղեկութիւնք և վաւերականց ներկայացան, որ շատ տարակյոսներ կը փարատէին, ամբասանութիւններ կը ցրէին, և նոր ըլլոյ կը ծագէին մինչև նոյն ժամանակներն յուզուած ինդրոց վրայ. և արբազան քահանայապետին կողմանէ բերնով, թերեւս նաև գրալ այլ և այլ հարցումներ կ'ըլլային առ Ալբար, և որոց պատափիաններն են Ալբարոյ կողմանէ արուածներն : Մտաղիր ընթերցողն պէտք չունի անդրագործութեան, թէ ինչպէս համաձայն և համամիտ են անոնց նախընթաց նման առիթմներու մէջ ուրիշ ազգային հայրապետութիւններէ արուածներու :

Հայրագութ և սիրալիր ընդունելութիւն մը եղաւ կաթուղիկոսի պատգամատրին, և կ'երեւի թէ առանձինն մնացրութեան արժանաւոր սեպուեցան իր առաջարկութիւնք: Կրկին Պիտօս հայրապետք, շօրրորդն և հինգերորդ, ընդարձակ Հոգեւուն մի առուին Հայոց՝ որ քանի մի տարի մնաց Ալբար իր Սուլթանշահ սրբով, և գեկեղեցի սրբոյն Մարիամու Եցիպատոււոյն, նախիկին տաճար Առանարադի, հայոն և հեթանոս Հոռվմաց ամբողջ մացած սակաւաթիւ հոյակապ շինուածոց մին, որ ցայսօր յափուենական քնով կը հանզիին բազմաթիւ ազգայինք, ինչպէս կը յայտնեն իրենց տապանաբարինք :

Բոլորովին նոր չէր այս ընդունելութիւնս ի Հոռվմ՝ Հայոց համար, որ մերքն զարերով յառաջ արդէն ծանօթ էին իրենց ունեցած վանցերանն և միանձամբք: Գերեւ մեր օրերը երեւան եղած անտարակուածիլ հնութեան յիշառակարաններ, դարերու հաւատարութեամբ իրարու աւանդած մահարձանն և արձանազիրը կը ցուցընեն թէ անզատին ի մետապաներորդ զարէ, առանց ուզելու

անկէ ալ յառաջ վեր ելլել, և ինչուան քրիստոնութեան առաջին դարուց գետնապամբանաց մէջ :

թէ ո՞րշափ առեն կեցաւ Արքար ի Հռովմ, որոյ բան մը չենք կրնար ըսեր, միայն ինչպէս ետքը պիտի տեսնենք իր Սոլլմանշահն որդույն հետ ի վենետիկ երթալէն ետքը, ուս միւսանգամ վրան ժամանակ անցնելին ետքը դարձաւ ի Հռովմ, և հոն հայկական տպագրութեան գործով զրադեցաւ. ասանկ ալ իրենց ցեղէն տէր Բարթոլիմէոս քահանայ մի, որոյ մէկ յիշատակարանը կը գտնուի 1600 թուականա. թէ « Ես Տէր Բարթոլուդիմէոս Արքարի աղջէն և անարծան վարդապետ և տատուածարան քահանայ մասյ այս մեր ազգին տան հովուապետ և խոսուավանակայր. և էր թօւին ՌՈՒ հրամանաւ կղեմենթո Ը սուրբ փափին. բայ Է »: Նոյնպէս ի կոր զրբի մը իր ինքնազիր սուրագրութեան հանդիպած ենք ի լատին և ի հայ. թէ Ego Bartholomeus Abagarus nationis Armeniorum de Urbe penitentiarium ab auctore donum acceperi: 1617. ի ձեռաց վարդապետին պարբեւառեալ տէր Փետրոսին, որ էր Սուրար? սահմանողին »:



Կամ Միքայէլ կաթուղիկոսի յանձնարարութեամբ, և կամ Արքար Երազա զրանուելուն պատեհաւը ուղելով օգոստի 1 օգտակար ըլլալ աղջին, ետևէ եղաւ յուսումն և ի ծանօթութիւն արուեստի տպագրութեան, որպէս զի յետոյ կարենայ ծաւալել յազգին: Այս բանիս հետամուռ եղած կ'երկի ի Հռովմ. բայց չիրնալով այն յաջողութիւնն ու զիւրութիւն աւնենալ՝ ինչ որ իրմէ ետքը իր որդին, բռնադատուցաւ երթալ ի վենետիկ, թերեւա աւելի ճարտար արուեստաւորի գոնելու ակնկալութեամբ, կամ ազգայնոց բազմութիւն գտնուելուն ի քաղաքին, յորոց անշուշտ նիւթեական օգնութիւն ալ կ'ակնկալէր իր այդ ձեռնակին յաջողութեան համար:

1565ին ի վենետիկ տպագրուած Սաղմուարան մի կայ զիմացնիս, պակասաւար ի

սկիզբն և ի վերջ, որ թէպէտն ինչպէս ըսկնիք, ի վենետիկ զրոշմուած՝ բայց և ոչ ի մեծի մատենադարանի քաղաքին կը գտնուի անկէ օրինակ մը, ոչ ի. Հայտանն և յեկեղեցով և ոչ այլ ուրեք, այլ միայն թերի և անկատար օրինակ մը ի մեր զրատան, և ամբողջն ի Միլան՝ յամբրուեան մատենադարանի, յորում հետևեալ տեղեկութիւնները կը գտնեմք: Գրոց ճակատի տեղ՝ գէմ առ զէմ երկու իջից վրայ՝ կրկին պատկերը կան. ի միւռմն սրբազն քահանայապետն Հռովմայ բազմեալ ի զանցյա, քովլը երեք ծիրանաց զգեաց կարգինալը և եպիսկոպոս մի. Երկու ուրիշ անձինք ալ հայկական զգեատիւ. մին մորուաւոր ծերունի, միւռն երիտասարդ: Այս իրաքանչիւր անձանց անսւանք նշանակուած են լատին տառիւր. Pius IV. Card. Alamius, Card. Borromeus. Epis. Alior Dibello, և ապա թուավանն M. LXV. ի հանդիպայ զրուած պատկերին վրայ կը տեսնուի վենետիկյ գրւոս մը իր խորհրդականաց ժողովցն մէջ, և իրեն ներկայութեանը հայազգի անձ մը՝ իրքի արտօնութիւն կամ հրաման մը ինչպելու զիրքի մէջ, և վրան լատին զրով մակագրութիւն. Venetia... Hieronymus Priuli. Marcantonio Armeno Abaghar. և թուականն M. D. LXV. Պատկերներուն տակն զրուած է հետեւալ տեղեկութիւն հայազգի և հայկակուու. « Ի թիվականիս Հայոց ՌՈՒ Ժ. Դ. Դ. ամին ես թոփասոցի Արքար զպիրս՝ ինզրեցի զայս նոր զիր. ի Հռոմ ի Պետրոս (= Պիոս) փափուն, և երես հրաման շինելու, բարեհասութեամբ այս կարտինալաց և այս եպիսկոպոսին. և իմ զրայմիա Սուլուանչայ որդւաց: Եւ եկեալ ի գեղեցիկ նաւահանկիստ մայրաքաղաքն որ կոչի վանատիկ, ի թագաւորաթեան Ելերեմոն դումին. և շինեցաք զայս նոր զիր. և զայս փոքր մեկնիչս սաղմուաց »:

Այս կրկին նկարուց մէջ՝ երկու այլևայլ զիմաց յիշատակութիւն կամ պատմութիւն կ'ակնարկուի. մէկը հրամանի՝ միւրը գործողութեան: Հրամանն կամ թոլլատութիւն ընդունելու համար՝ հարկ մը չենք տեսներ ինչուան Հրովմայ քահանայապետի զիմել,

աղաշաւոր ու միջնորդ ծիրանաւորք վնասոել , մինչ օգտակար ձեռնարկ մը կար և հաւասարապէս ամենուն փափարելի : Հաւանական կ'երենայ թէ մանաւանդ նիւթական նոգասոր մը կարուսութիւն կար , և արուեստին հմտուանձանց . և կ'երենայ թէ նպաստի ինդիրն յաջող ելք ունեցած պիտի ըլլայ . հակառակ զիկուսածի մէջ հարկ մը չկար ծախը ընել և այն պատկերը գնել ի զիրսն ,

սուսութեան յիշատակութեան հետքն անզամ մնացած չէ կամ կորուած է : Եւ սակայն , կարծես թէ տառանձինն նշանակուելու արժանաւոր դէպր , մ'էր այն , իրենց համար բոլորովին անծանօթ՝ արեւելեան լեզուով արպազութեան առաջին անգամ տրուած թոյլ-սուսութեան մը՝ հասարակապետական կուսակարութեան կողմանէ , որ այնչափ խոճամիտ և զարկուած էր յայսմ մասին . մինչ զեռ կե-



Մէկ պատկերին մէջ կ'երենայ որբազան հայրապետն Պիտու , որոյ ներկայացած է հայ պատգամաւորութիւնն իրեն խնդիրով : Մէնք արդէն ըսինց թէ Հայոց համար սեպհական հոգետուն և եկեղեցի տուած էր նաև , և որոյ գոներէն մէկուն վրայ ցայսօր կը կարդացուի իր բարերար անունն և գործը . միւս ծիրանաւորքն և եպիսկոպոս՝ Հայոց ազգի ինամակալք և պաշտպան կը թուին . որոց միջնորդութեամբ կը յուսոյաց անշոշա Արքար՝ մինչ ի զահն քահանայապետական հասցընել իր խնդրուածոց նիւթըն և աղերսին ընդունելութեան վսահութիւնը :

Հաւանականարար հրամանն ու պաշտպանութիւնն կը տրուի . բայց Արքար նարաւար արուեստագիտաց չկարենալով հանդիպիլ , կ'անցնի ի վենետիկ . ժամանակին , ինչպէս արդէն յիշեցինք , անուանի և մեծ շահաստան քաղաք մը իր ուժով , հարստութեամբ և արուեստից համեմատական յառաջիմութեամբ : Այս երկրորդ պատկերին մէջ Արքար և Սուլթանշահ յանդիման կ'երենան Փրիուկի չերոնիմու տոքին , հրաման ընդունելու իրմէ Սալամազրոց պազգութեան : Հետաքննական է որ վենետիկոյ զիւնաց մէջ , ուր ամէն հրամանագիրը և արուեստութիւնք մանր և տեղնիտեղլ արձանագրուած կը պահուին , այս մեղի համար կարեւոր ար-

Ազաթք-ք-եմովսէս-հցայ, ին այս գիւղադիմութեան մէջ ապաւեն եղեր մեզ յազգեն յ ազգ-միւչ չելերինք հաստ աստեալին . ստեղծեց եր զերկիրեզա մենախն տիեզերս :

Յ աւիտենից մինչեւ յաւիտեանս դուես . և մի գարճուցամեր զմարդ իւսաւուական և ասսացեր դարձար

մենախն տիեզերս :

ցած են յունական լեզուով եղած սպազութեանց համար արուած հրամանագիրը : Ի վերջ զրոյն հետևեալ յիշատակարանն կը զնէ Արքար . «... կազմեցաւ , կ'ըսէ , սուրբ երգարան դաւթի լու և յընաիր աւրինակէ Գանեցոյ վարդապետի , ի թուականիս Հայոց Ռժիշ , մայիս Ժիշ . աւրն ուրաքաթ . Ժիշ ժամի ... Առ ոստ Մէնքիսեղեկ եպիսկոպոսին , ի մայրաքաղաքն Վանատիկ ,

ընդ հովանեաւ սուրբ Մարիամ Աւետարանցին, ի Հայոց հոգետունն, ի ժամանակ Սիւմանի... Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթօ ձեր զաշխատողքս տորս, զառաջինք և զմիջինք. և զլերջինքն. և Աստուած յշէք զձեզ իւր միւսանկամ զալուստն... Ամէնն թձկի թուփա է. ամէնն կոփած է՝ և իսկի պրշագիր չկայ ի զիբք. բաւ է».

Մեր ընթերցողաց աշքին առջն զնենք էջ մը սոյն տպագրէն, գաղափար մը տալու գրոցը ձերն, ու ընտհանրապէս տպագրութեան ճաշակին, որ իրաւամբ ընտիր կրնայ համարուիլ ժամանակին արուեստական յառաջաղինութեան տեսակիսով. մանաւանդ ի զուկի իջն զրուած խորանազարպին, որ իտալեան գեղարքւեստական ճաշակի նրբութիւն ունի: Տարբն երկու տեսակ են, մեծ և փոքր, ինչպէս կը նկատէ ընթերցողն: Զապագիրը կամ թոշնագիրը ալ ունի:

Ազգաբան այս առաջին տպագրութիւն, ինչպէս ըսկիք, եղած է ի 1565—8:

\* \*

Տպարանի անուն ուր զրոյմուած է՝ չենք դտներ. հաւանականաբար իր նշանադրուշն է հետեւեալը.



Երկու տարի ետքը զլեբզար և իր ընկերութքը փոխադրուած կը գոնենք ի կոստանդնուպոլիս:

Ճշահնիբնեան Մազարիս դպի՞՝ կ'աւանդէ իր ձեսագիր ժամանակագրականաց մէջ. «ՈՒՓԶ (—1567) ի հայրագետութեան Հայոց Ծետան Միքայելի իլլ. ամի կաթու-

դիկառութեանն, ի մայրաքազաքն կոստանդնուպոլիսի յերկրորդի ամի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մէլիմի, և ի շրորոդ ամի պատրիարքութեան տէր թակոր բարունակեաի կոստանդնուպոլսոյ, առ ոսո Ցովհաննէս եպիսկոպոսին ընդ հովանեաւ Սուլդ Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց՝ եղեւ ստամփայ, այսինքն պասմայգիր. և տպեցա փարք Քերականութիւն տղայոց, ձեռամբ անարժեան կնքագիր զպրի մերս Ցովօրին»: Ցածորոց տարւոյն մէջ ալ այսպէս կը նշանակուի. «ՈՒՓՀ. ի կոստանդնուպոլիս նոր ստամփայ զիր սահմանեցին ի հայրապետութեան Ծետան Միքայելին կծմիածնի և: ի պատրիարքութեան կոստանդնուպոլսոյ տէր Ցակրին, ընդ հովանեաւ Սուլդ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խորիսիապցի Առարեալ արեղային, արհեստագործութեամբ Աքիար զպրին և իր թագալզարմ Անտոնինոս Սուլթան սարկաւալին, որոյ գրովքն տպեալ Ցօնացոյս յառաջ բերին»:

Կ'երենայ թէ Մազարիս դպրի այս խօսքերը նոյն զրոց յիշատակարաններէն առնուած ըլլան: Փափաքելի էր զանոնց ունենալ, որով թերեւս կարելի կ'ըլլար մեզ ընդպարձակարոյն և աւելի զոհացուցի տեղեկաւթիւններ ատլ այս զրոց վրայ: Փողը քերականութիւն ըստուածը այրբենարան կամ քերական կը թուի: ի մեր մասենազարանի, ինչպէս ըսկիք, չկան այդ զրուեր. չենք ալ կարծեր որ ուրիներու քով գտնուին, բայց թերեւս յէծմիածնին կամ յերտսաղէմ և կամ ի լիլունոյ: Ուրիշներէ ալ տրուած տեղեկութիւնք՝ հաւանականաբար Զամբեան պատմագրութեան հետեւողութեամբ են, որոյ հեղինակն՝ մեզի նման տեսած չէր այն զրբերը:

Բաց ի Ցօնացոյս, զոր յիշատակեց Մազարիս, Արզարու և իր գործակցաց համար կ'աւանդի, թէ նոյնպէս ի Պոլիս, և անզուշտ մի և նոյն տպագրատան մէջ, ի 1568 թուականին հրատարակուած ըլլան նաև Ցաղարան, Ժամանակիրը, Պատարագամատոյց, և յաջորդ 1569 տարւոյն մէջ նաև Մաշտոց մը, — Ազգային բանասիրական հանգէս մը, (Բազմավէպ, 1890 մարտ), կ'ըսէ A.R.A.R. @

թէ « (Արգարեան)՝ Սաղմասին ատաերով տը-  
պուած են Արգարու ձեռնարկութեամբ ի կոս-

տարագամնատոյց, 1562 թուին, յօրոց յօրի-  
նակը կը պահուին նաև ի մեր մատենադա-  
տանդուալովիս՝ Մշշաոց, Ժամագիրց և Պա-

Շարայարելի

## ՈՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՈ

(Շարումակութիւն — Տես յէջ 302)

**Ա**նջրեիլ գագրած ըլլալով, կ'ու-  
զնք այցելութիւն մը ընել Սրբոյն  
Յակովայ անունը կրող հոչակաւոր  
խոռոշին, ու անանկով օգտակար ը-  
նել գեռ եւս մեղի մնացած քանի մը  
ժամը. Երկար գաշնադրութիւններէն  
ետքը վերջապէս կը յաջողինք գտնել  
մէկը որ յանձնառու կ'ըլլայ ընկեր և  
առաջնորդ ըլլալ մեղ.

Գեղէն ելեկով՝ կը հետևինք սառ-  
նարանէն րզիսող հեղեղի ընթացքին,  
ուստի կ'անցնինք յետոյ, և մէկգի  
թողով դէպի խոռոշին խորը յառա-  
ջելու խորհուրդը, որ երիվարաց հա-  
մար մեծապէս վտանդալից է, փլածոյից  
վրայ հազիւ հետքը երեցող՝ հեղեղա-  
տին ձախակողմը եղող ճամրուն ուղ-  
ղութիւնը կը բռնենք, թէպէտ մէկէն  
զզջալով թէ ինչո՞ւ չհետևեցանք մեր  
առջի մոտածութեանն, հետիսն եր-  
թալու այն ճամբաններէն. ինչու որ  
բռնադատուեցանք ձիերէն վար իջ-  
նել, ինդ անասունները կը սահէնն  
ու գահավէտ ըլլալու մերձաւոր վը-  
տանդ կար մինչեւ ութսուն մետր խո-  
րութիւն ունեցող փէրու մէջ, ձամ-  
բռն վրայ՝ պարոն Շանար Մ'եծն Ա-  
րարատոյ հիւսիսային կողմը պատող  
կարծր քարանց (andésites) հաւա-  
քում մը կը ժողվէ:

Երկու ժամանան երկար ու աշխա-

տալի վերելքէ մը ետքը կը համելնիք  
դարաստափի կերպարանք ունեցող հը-  
րուանդան մը, որ անշուշտ սառնա-  
րանին աջակողման մեծ քարակոյտին  
մասն է. 2250 մետր բարձրութեան  
վրայ ենք. և կ'աւանդեն թէ ատենօք  
հոն եղած ըլլայ Սրբոյն Յակովայ  
մենաստանն, բայց հիմայ այդ շէնքին  
հետքն անգամ չի տեսնուիր, ուր Մ'ոն-  
քէրոյ կ'ըսէ թէ ազօթեր է. ինչպէս  
չկայ այն ուռենին՝ միակ ծառը տեղ-  
ույն, որուն համար կը զրուցուէր, թէ  
տապանին մէկ կտորն էր՝ արմատա-  
ցած և կանաչազարդ տերեններով ա-  
ճած նոյն տեղույն վրայ:

Այս մենաւոր և անբնակ մենաս-  
տան՝ իր նուիրական սրբութիւնը  
պարտական էր՝ ոչ Սրբոյն Յակով-  
բայ, որոյ անունով կը կոչուի, այլ  
հոն հանդիպած հրաշքի մը՝ զոր այս-  
պէս կը զրուցեն աւանդութեամբ։  
Էջմիածնի միաբաններէն մին փորձ  
փորձեր էր Արարատոյ գագաթն  
բարձրանալու՝ գովիլի բաղձանքով  
նոյեան տապանին մնացորդը տես-  
նելու, Բայց Աստուծոյ կամքն էր որ  
Նոյայ ետքը ուրիշ մահկանացու չկա-  
րենայ կոխել աշխարհի փրկութիւնը  
պահող տապանին մէջ. որով խեղճ  
միանձնն ամէն ջանք և աշխատանք  
արդիւնք մը չունեցան։ Երբ օրուան-